

## Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ (1906-1909)

### Ա. Ե. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ն. Աղբալյանի գրականագիտական ժառանգությունը հիմնականում սփռված է կովկասահայ մամուլում՝ դարավերջի ու դարասկզբի թիֆլիսյան որոշ պարբերականներում, որոնց հանդեպ քննադատը ունեցել է կա՛մ հոգեհարազատ ու համակիր վերաբերումներ, կա՛մ էլ դրանք եղել են իր իսկ խմբագրած թերթերն ու ամսագրերը: Նրա «Գրական-քննադատական երկերում» ամփոփված նյութերը (Բելրուս, 1959 թ.) հիմնականում առնված են «Մուրճից», «Նոր հոսանքից», «Հորիզոնից»: Նոր «Մուրճում» (1900-1907 թթ.) հրատարակված մի շարք արժեքավոր գրախոսություններ, որոնց հեղինակը պարզ չէ, մեր կարծիքով, պատկանում են Աղբալյանի գրչին, որոնք իրենց բնույթով, ոճով վավերացնում են նրա ինքնությունը: Որ նա աշխատակցել է «Մուրճին» մեկ Արասխանյանից հետո, հավաստում է ինքը կենսագրական մի հակիրճ գրությամբ՝ ուղղված Ս. Վրացյանին: Նոր «Մուրճից» անմիջապես հետո Աղբալյանն աշխատակցում է կովկասյան այս շրջանի մի շարք պարբերականների, որոնց անվանում է «մեր թերթերը»՝ նկատի ունենալով Հ.Յ. դաշնակցությանը պատկան պարբերականները: 1906-1909 թթ. ընկած ժամանակահատվածը անմիջական շարունակությունն է «Մուրճի» գրական դպրոցի՝ տեսական ու բովանդակային խնդիրներին վերաբերող իր յուրօրինակ հայացքներով ու մոտեցումներով:

Համառոտ ակնարկով փորձենք դիտարկել նրա այս շրջանի առավել արժեքավոր աշխատանքները՝ տեղ-տեղ համեմատության եզրերի անհրաժեշտությամբ մեկ անդրադառնալով նախորդ կամ հետագա շրջանների քննադատական հոդվածներին:

Կովկասահայ գրական շարժումները անմասն ու մեկ անհաղորդ չմնացին դարասկզբի քաղաքական հզոր այիքների ազդեցությունից: Հեղափոխության հուժկու թափով ներշնչված մտավոր ու ստեղծագործ ուժերը շատ շուտով ապրում են նույնաստիճան անկում ու հիասթափություն, որն առաջին հերթին դրսևորվում է նրանց գեղարվեստական երկերում: Արևմուտքում արդեն իսկ արմատավորված գրական մի շարք հոսանքներ ռեակցիայի տարիներին անհրազել գտնում են իրենց համակիրներին մեկ հայ իրականության մեջ: Հոռետեսությունը, անհրազել պատկերները փոխարինելու են գալիս պայքարի ու կռիվ տրամադրություններին: Քաղաքական ազդեցիկ ուժերը ենթարկվում են հալածանքի ու հետապնդման: Ակսվում է տրիարաֆոնիկ դատավարությունը՝ «Դաշնակցության դատը»: Տասնյակ մտավորականներ, որոնք այս կամ այն կերպ հարել էին ՀԹԴ-ին, ձերբակալվում կամ քստորվում են: Սակայն ո՛չ բռնությունները, ո՛չ ամենօրյա հետապնդումները արգելք չեղան, որպեսզի Կովկասում սկիզբ առած հեղափոխական և ազատագրական տրամադրությունները շարունակվեին ու զարգանային հանձին Հ.Յ. դաշնակցության, որ Կովկասում իր ուժերը հիմնականում կենտրոնացրել էր Թիֆլիսում: Կազմակերպության գործունեության լավագույն վկայությունը այդ շրջանի նրան պատկան մամուլի անխափան հրապարակումներն են՝ հասարակության մեջ ազդեցիկ հեղինակություն վայելող աշխատակազմով: 1906-1909 թվականներին լույս են տեսնում «Յառաջ», «Ջանգ», «Ալիք», «Երկիր», «Ժամանակ», «Փայլակ», «Ժայռ», «Խարխիս», «Կովկասի առավոտ», «Նոր ալիք», «Վտակ», «Գործ», «Ջանգակ» օրաթերթերը, միևնույն գաղափարական ուղղվածությանը դավանող պարբերականներ, որ ցարական հետապնդումների արդյունքում ժամանակ առ ժամանակ փոխում են իրենց խմբագիր-հրատարակիչներին՝ Ա. Ահարոնյան, Եվգենյա Մեյլիք-Քալանթարյան, Մ. Մուրադյան, Ա. Մանասյան, Գևորգ Տեր-Առաքելյան և ուրիշներ:

<sup>1</sup> Տե՛ս Մ. Թ., «Նիկոլ Աղբալյան», «Յառաջ», Փարիզ, 1973, թ. 12813:

Նշված բոլոր օրաթերքերն ունեն հասարակական-քաղաքական-գրական բովանդակություն, ուստի ներառած նյութերն էլ արտացոլում են օրվա՝ այդ առնչությամբ կարևորություն ներկայացնող հարցերը: Թղթակիցների կազմը՝ Լեո, Հ. Թումանյան, Շիրվանզադե, Ավ. Իսահակյան, Ա. Աբելյան, Ե. Թոփչյան, Ա. Ահարոնյան, Գ. Խաժակ, Գ. Ղազարյան, Հ. Աղաբաբ, Ա. Շահաբունյան, Վ. Փափազյան, Մ. Վարանդյան, Ա.-Դո. արդեն իսկ խոսուն վկայությունն է այն իրողության, որ այդտեղ ընդգրկվել էր ժամանակի մտավորականության լավագույն փունջը: Նիկոլ Աղբալյանը ևս, չնայած իր հասարակական, քաղաքական լիարտուն գործունեությանը, անհաղորդ չի մնում այս պարբերականների աշխատանքների՝ ճիմնականում իր մասնակցությունը դրսևորելով գրականության ու նրան առնչվող հարցերի քննության շրջանակներում:

Աղբալյանի այս շրջանի քաղաքական եռուն գործունեության մասին են վկայում և դրանով նաև հարուստ կենսագրական նյութ մատակարարում 1906թ. մայիսի 30-ին Հայդեբերգից, նույն թվականի հուլիսի 17-ին Եուշից, 1907թ. ապրիլին՝ Լոզանից, նույն թվականի դեկտեմբերին՝ Ալեքսանդրիայից, 1908թ. հունվարին՝ Կահիրեից ուղարկված թղթակցությունները՝ տպագրված «Ալիք», «Փայլակ», «Վտակ» օրաթերքերում՝ Und Doch, Ն. Հանգոյց կեղծանուններով: Դրանցից միայն Լոզանից ուղարկված նյութն է կրում իր ստորագրությունը:

1906-1909թթ. լույս տեսած օրաթերքերի այս շարքից Աղբալյանը կանոնավորապես թղթակցել է «Ջանգակին», որ լույս է տեսել 1908-1909թթ., ընդ որում, նրա ստորագրությամբ նյութերի հանդիպում ենք միայն 1908թ. համարներում՝ պարբերական հաճախականությամբ, քվով 24 գրախոսություն, «Վտակում»՝ 13. «Գործում»՝ 4. «Ալիքում»՝ 3. և մեկ նյութ՝ «Փայլակում»՝ բոլորը էլ առավելապես 1907-1908թթ. գրված: Բովանդակային առումով դրանց ճշդ մեծամասնությունը ժամանակակից գրողների երկերի կամ թարգմանությունների առիթով գրված գրախոսություններ են, որոնք թե՛ ժանրային, թե՛ աշխարհայացքային, թե՛ գրականագիտական առումներով ուղղակի շարունակությունն են «Մուրճում» հրատարակված նյութերի: Մոտեցման ու գնահատման չափանիշները, թերևս, այս շրջանում ավելի հստակ են, հաստատուն և ընդգծված, հանգամանք, որ քննադատի հասունության արտահայտությունն է:

Թարգմանական գրականության անդրադարձներից կարող ենք առանձնացնել Լ. Տոլստոյի «Ժողովրդական պատմվածքների» Ա. Բ. պրակները (թարգմ.՝ Ա. Մ.), Կոնան Դոյլի «Շերլոկ Հոլմսի արկածները, ուշացած վրեժխնդրություն» (թարգմ.՝ Արսեն Տեր-Դանիելյան), Լեյմոնտոպի «Բանաստեղծությունները» (թարգմ.՝ Մ. Տարախչյան), Ի. Իվանովի «Հանդիպումները» (թարգմ.՝ Ար. Գր.), Ա. Ցագարելու «Սիբիրականը» (թարգմ.՝ Գ. Միրադյան), Վ. Հաուֆի «Ինքնակոչ իշխանը» (թարգմ.՝ օր. Տեր-Նիկողոսյան):

Հայ գրողներից Աղբալյանի քննությանը արժանացել են Սիամանթոն («Հայրորդիներ»), Վ. Տերյանը («Մթնշաղի անուրջներ»), Գ. Սունդուկյանը («Բաղնի բոխյա»), Հ. Աղաբաբը («Մանկական արոմ»), Գ. Քալաշյանը («Ներշնչություն»), Ա. Վարդանյանը («Անարխիստ»), Հր. Ճալալը («Թշնամիներ»), Ղ. Աղայանը («Բեօթոլի»), Հ. Թումանյանը («Մանկական պատմվածքներ»), Ա. Պալազարը, Լ. Լորենցը և ուրիշներ:

Հատկապես Աղբալյանի գեղագիտական ընկալումները բացառապես նյութեր են Լ. Տոլստոյին, Է. Հարտմանին, Ջ. Միլտոնին նվիրված հոդվածները:

Որ Աղբալյանը եղել է Տերյանի առաջին գրական քայլերը խրախուսողն ու դրվատողը, հավաստում են մի շարք աղբյուրներ՝ նրա անունը հավելելով Լ. Շահաբունյանի, Ստ. Ջորյանի, Ե. Չարենցի շարքում՝ նկատի ունենալով ամենից առաջ Վ. Տերյանի՝ 1908 թ. Թիֆլիսում հրատարակած «Մթնշաղի անուրջների» գրախոսությունը, որ համարվել է կորած և տեղ չի գտել Աղբալյանին վերաբերող քննական հոդվածներում և ուսումնասիրություններում:

Վ. Տերյանի «Մթնշաղի անուրջներին» Աղբալյանը անդրադարձել է 1908 թվականին «Ջանգակ» օրաթերքի 12-13 համարներում: Ավելի ուշ՝ 1914 թվականին, Արմենուհի Տիգրանյանի (Մենուհի) «Բանաստեղծություններ» ժողովածուի (Թիֆ., 1914., 80 էջ) քննադատականում («Նոր հոսանք», Թիֆ., 1914, թ. 4, էջ 643) հանդիպում ենք Տերյանի ստեղծագործությանը վերաբերող նոր բնորոշումների: 1916 թվականին «Հորիզոն» 17-րդ համարում տպագրվում է ևս մի գրախոսություն՝ այս անգամ բացառապես նվիրված պոետի «Տխրություն» բանաստեղծությանը: Ձեռքի տակ ունենալով այս աշխատանքները՝ հակված ենք կարծելու, որ

՝ Տե՛ս Ծ. Մըջբեռն, «Նիկոլ Աղբալյանի մտածնագիտությունը», «Արտ», Քննություն, 1948, թ. 1-4:

դեռևս անհայտ աղբյուրներում կգտնվեն Տերյանին, նաև ուրիշներին բնորոշող՝ Աղբալյանի գրչի նոր գործեր: Դրա համար բավարար հիմք է տալիս նրա գրական գործունեության մեկ այլ ոլորտ՝ ամենատարբեր լսարաններում կարդացած դասախոսությունները, որոնք մի մասն է, ցավոք, գրի առնվել ու հրատարակվել:

«Մթնշաղի անուրջների» գրախոսությունը առաջին հայացքից թվում է բավականին խիստ, զնահատումների տեսակետից՝ երբեմն ծայրահեղությունների հասած: Հավանաբար այս մտտեցումը ժամանակի գրական շրջաններում առիթ է տվել տարակարծությունների, չափանիշների անհամաձայնության, որը և քննադատից թելադրել է կրկին անդրադառնալ Տերյանի առիթով արած իր դատողություններին նորովի քննությանը, կարծես որոշ շփոթություններ, անհասկացություններ ցրելու միտումով: «Մթնշաղի անուրջներին» վերաբերող մի քանի մտտեցումներ, որ արվել են հպանցիկ, առանց խորքային մեկնաբանություններ տալու, վերլուծելու, քննադատի ենը և աշխարհայացքը պարզաբանող դատողությունների, պետք է որ ակնկալելին նման անդրադարձներ: Այս հանգամանքը, բացի Աղբալյանի՝ պոեզիայի գեղագիտական ընկալումներից, որ գլխավորն է այս պարագայում, մեր կարծիքով, պայմանավորված է նաև քննադատի՝ ընթացիկ գրական բոլոր երևույթներին արձագանքելու հետևողական ցանկությամբ, որ իր զբաղվածության պայմաններում երբեմն շտապողականության կնիք էր կրում և պարզաբանումների կարիք զգում. իր գրական-քննադատական ողջ ստեղծագործության ընթացքում նա այդպես էլ չկարողացավ հետադարձ մի հայացքով սրբագրել իր ժառանգությունը, որի մեկտեղումն իսկ արդեն մեծ խնդիր էր: Քիչ դեր չի ունեցել նաև մի կողմից Աղբալյանի՝ արդեն բոլորի կողմից ընդունելի լինելը և հեղինակության ազդեցությունը, մյուս կողմից Տերյանի գրական ասպարեզ իջնելու նորամուտը: Գրախոսության առաջին իսկ տողերով Աղբալյանը փաստում է Տերյան բանաստեղծի ծննդի իրողությունը. «Վ. Տերեան անպայման բանաստեղծական տրամադրություններ է շնորհիք ունի, նրան պակասում է արեստը: Իմթնշաղի անուրջներ... ոչ մի խորագիր այնքան համապատասխան չէ եղած բովանդակության: Իսկապես որ անուրջներ և իրապես մթնշաղի անուրջներ»: Ծարունակության մեջ գտնում ենք Տերյանի էության և բանաստեղծական ոգու բացահայտման ամենաճշգրիտ մեկնակետեր. «Այստեղից արդեն կարող եք գուշակել, որ գործ ունիք բանաստեղծական մտքի. հոգու հետ: Այստեղ կայ բանաստեղծական մտքի խլրտում... Որքան՝ մեղմ, մաքուր և նուրբ լիցացում»: Կոյն մտտեցումը նաև հետևյալ հատվածում. «Հոգու այն տարրերը, որ բնդնշմարում ենք նրա անձն շարքերի միջից, տրամադրությունների մաքրությունն ու մեղմությունը, հակումների մեղկ գալարումները և երբեմն վայրկեանական պողպակումը, կատակի և սրամտութեան կատարելալ բացակայությունը մեզ բերում են մի խոհուն ոգի, որ եթէ չը գոհեցնանայ կեանքի ցեխի և հեշտանքի մահացնող գրկի մէջ. կարող է զարգանալով դառնալ մի մեծություն մեր գրականության համար:

Կրկնում ենք, արեստն է, որ պակասում է նրան»:

Թե արվեստի որ «պակասությունը» նկատի ունի Աղբալյանը, իր այս գրախոսության մեջ չի երևում. դրա լուծումները տեսնում ենք 1916 թվականին գրած «Տխրության» վերլուծության մեջ՝ «Քայլող համբոյի» և պոետի բանաստեղծական ներշնչման ու գիտակցության առնչությունները պարզաբանող նրա դատողություններում, որ, այս հոդվածի քննության նյութը չլինելով հանդերձ, որոշ լուսաբանությունների ակնկալիքով՝ տեղ-տեղ հայացք ձգելու կարիքն ունի. «Բայց ներշնչման ժայթքածը պետք է անցնի քերթողի արթուն գիտակցութեան առջեկից, բանաստեղծը պետք է նկատե ներշնչման վրիպումները և շտկել. եթէ կան կապեր ու առնչություններ, որոնք թում են անջատ ու անլարի» - որովհետև միարար օղակների մեծ մասը կամ մինչև ամբողջ շղթան ընկած են՝ քերթողն իր արթուն գիտակցութեամբ պետք է վերականգնել գոնէ մի երկու օղակ, որ ընթերցողը կարողանայ նրա երեսակայութեան թոխչիք հետևել: Մի խօսքով՝ ներշնչումով է մարդ բանաստեղծ դառնում և գիտակցութեամբ՝ արուեստագետ. ահա թէ ինչու «քայլող համբոյը» ներշնչման մի վրիպում է և արուեստագետի անփորձություն: Եւ Վ. Տերեանի մէջ պարզ տեսնում ենք իսկական բանաստեղծի երկնատուր տաղանդը և սկանակ վարպետի անփորձ ձեռքը»:

<sup>1</sup> «Ջանգալ», Թիֆլիս, 1908, ք. 12:

<sup>2</sup> Կոյն տեղում:

<sup>3</sup> Կոյն տեղում:

<sup>4</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1916, ք. 17, նաև՝ Ն. Աղբալյան, Անթրոպական երկեր, Պետրոպ, Բ. 2, 1966, էջ 215:

Արժևորման արտաքուստ խիստ ու կտրուկ այս կերպը ընդհանրապես բնորոշ է Աղբալ-  
յանի գրչին: Ուշադիր ընթերցողը միայն կնկատի, որ քննադատը այսչափ զգայուն է ամենից  
առաջ իր կողմից ընդունվածների հանդեպ, նրանց, ում ապագան ինքը արդեն շաղկապել էր  
հայ գրականության երկարամյա ծիրին: Ուստի խնդիրը ոչ այնքան գրական երկի արժեզրու-  
մանն է վերաբերում, որքան նրա՝ կատարելության հասցնելու մղումին, որ Աղբալյանի դեպ-  
քում դրսևորվում է ինքնատիպ գեղագիտական ընկալումների հայեցակետի շրջանակներում:  
Այսպիսի մոտեցում տեսնում ենք նաև Լ. Օսնթի «Հին աստվածների» քննության մեջ. գրական  
երկի ամենաանձան թվացող մանրուքների մեջ հնարավոր բոլոր աններդաշն կողմերի բա-  
ցահայտումը Աղբալյանը մեկնաբանում է միմիայն այն առավել կատարյալ տեսնելու պարզ  
ցանկությամբ, որովհետև թե՛ Օսնթը, թե՛ Տերյանը իրենց տաղանդի ուժով արդեն իսկ կատա-  
րել էին ինքնահաստատման վճռական քայլեր. քննադատներից մնում էր ցուցաբերել առավե-  
լագույն ուշադրություն և անշահ հետևողականությունն ըշված, նաև մյուս շնորհալի արվեստա-  
գետների երկերում տեղ գտած ինչ-ինչ խնդիրների սրբագրման համար: Աղբալյանը այս հար-  
ցում ցուցաբերում է առավելագույն պահանջկոտություն, որ տեղ-տեղ առիթ է տալիս թյու-  
րըմբոսման և հակասական տրամադրությունների:

Նմանատիպ մի գնահատական վերաբերում է Տերյանի լեզվին. «Բայց ընդհանուր առ-  
մամբ նա չի տիրում հայ լեզվին. մինչև իսկ զարմանալի անմասնություն կայ նրա բառական ան-  
տաշ լեզվի և մեղմ հիւթի միջև. կարծես գարնան թարմ կանաչ լինի ճաքած սառույցի տակ»<sup>7</sup>:

«Անտաշ լեզվի» հանգամանքը ևս այս գրախոսության մարզաբանելը բավականին  
միակողմանի կդիտվեր. այս հարցում էլ դրսևորվում է Աղբալյանի մեկ այլ՝ լեզվի ու գրակա-  
նության հարաբերությունների հանդեպ ունեցած մոտեցումը, որ տեղ է գտել ինչպես լեզվա-  
բանությանը վերաբերող նրա գործերում, այնպես էլ ամենատարբեր քննադատական հող-  
վածներում, հատկապես թարգմանությունների առիթով արած դիտողություններում: Աղբա-  
լյանը շատ ավելի հակված է ժողովրդական խոսվածքին, բառ ու բանին, այնտեղ է տեսնում  
ասելիքի արտահայտման ուրույն եղանակը: Եվ դա պատահական չէ. դեռևս մանկուց ար-  
մատներ գցած այս հակումը Սայաթ-Նովայի երգերով շրջապատված ու սնված լինելու  
արդյունք է. որ ուղեկցեց նրան մինչև կյանքի վերջը: Թումանյանին, Աղայանին, Իսահակյա-  
նին, Սայաթ-Նովային վերաբերող Աղբալյանի քննական հողվածներում ու դասախոսություն-  
ներում ակնհայտորեն երևան է գալիս նրա լեզվական կողմնորոշումը, և լուծվում է մանա-  
վանդ Տերյանի «անտաշ» լեզվի հանգամանքը՝ ոչ այն ըմբռնմամբ, անշուշտ, ինչպիսին այն  
կընկալվեր այսօր: Նշված գրողների մասին իր տեսակետները՝ գրական առաջին քայլերից  
մինչև հասուն գործեր, մնացին անկեղծ հիացումի և գեղարվեստական բարձր չափանիշների  
որակումի սահմաններում: Որպես խոստովանանք է հնչում «Նավասարդ» գրական տարեգր-  
քի գրախոսության մեջ ասված հետևյալ տողերը. «Թիւրքաբայերից ովքեր խոսնարություն ու-  
նեցան այդ հանճարի [ժողովրդի] ձայնը լսելու եւ իմաստութիւն ունեցան նրան անսալու՝ ի-  
րենց անունը կտակեցին ապագային՝ Հայրիկ, Արուսեան, Պարոնեան. նրանց սիրտը  
տրորվում էր ժողովրդի լայն սրտի բաբախին ներդաշնակ: Թիւրքահայ գրականութեան ճշանա-  
բանը պետք է լինի «վերադարձ», այո՛, բայց վերադարձ դէպի ժողովուրդը, նրա ստեղծագոր-  
ծութիւնը, նրա մտքի եւ զգացումի ձևերը, որ պիտի տարերքը կազմեն «հայ ինքնություն գրա-  
կանութեան եւ գեղուարուեստի»<sup>8</sup>:

Այս առնչությամբ Տերյանի առիթով Աղբալյանը հետևյալ դիտողությունն է անում. «Հա-  
մակրելով այս նոր շնորհքը, մենք մեզ թոյլ ենք տալիս իբրև սկսնակ բանաստեղծի մի քանի  
խորհուրդներ տալ, որ կարող է թերեւս օգտակար լինել նաև ուրիշների: Ուսումնասիրեցէք  
հայ լեզուն իր բուն աղբիւրների վէջ, ժողովրդի բերանում, տաղանդաւոր հեղինակների երկե-  
րում, ազգագրական հիւթերի հարուստ ժողովածուներում և մեր ավտոր անցեալի հարուստ  
մնացորդներում»<sup>9</sup>:

Տերյանի արվեստի գնահատության նոր խոսք է Արմենուհի Տիգրանյանի (Մենուհի)  
«Բանաստեղծություններ» ժողովածուին նվիրված գրախոսության մեջ տեղ գտած մտքերը, որ  
արվել են Իսահակյան-Տերյան գրական դպրոցների համադրության առիթով: Իսահակյանը,

<sup>7</sup> «Ջանգակ», Թիֆլիս, 1908, թ. 13:

<sup>8</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1914, թ. 30:

<sup>9</sup> «Ջանգակ», Թիֆլիս, 1908, թ. 13:

Աղբայանի կարծիքով, իր «Երգեր ու վերքերով» մի ամբողջ տասնամյակ գունավորել է հայոց բանաստեղծությունը, դարձել նրա կենտրոնական դեմքը: Ժամանակի տիրական մղումներով՝ հակում դեպի ժողովուրդը և հերոսությունը, ներշնչված գրողները, զգալով նրա ստեղծագործության թարմությունը, նվազ կամ առավել ազդվել են Խոսհակյանի պոեզիայից: Ժամանակի մեկ այլ՝ հակադարձ տրամադրությունների և միտումների՝ վիատության, տարտամության, հիասթափության ու ելքի որոնումների արտահայտությունն է Տերյանի ստեղծագործությունը, որը նույնպես ունեցավ իր արբանյակները, որոնք միևնույն մտավիճակները արտահայտեցին տարբեր կողմերից. «Ուղիղ տաս տարի յետոյ (1908) լոյս տեսաւ մի ուրիշ փոքրիկ գրքոյկ «Մթնշաղի անուրջներ» խորագրով, որ նույնպէս գունատրում է մեր վերջին տասնամեակի բանաստեղծութիւնը: Վ. Տերեան նույնպէս դարձել է կենտրոնական դեմք. շատերն զգում են նրա բանաստեղծութեան թարմութիւնը և անլի կամ նազ չափով ազդում նրա տրամադրութիւնից, լեզուից, արտահայտութեան ձևերից, նիւթերի մշակման եղանակից»<sup>10</sup>:

Տերյանի «Մթնշաղի անուրջներ» քննադատականում տեղ գտած որոշ մտքեր արժարժվում են Աղբայանի՝ այս շրջանին պատկանող ևս մի գրախոսության մեջ, որ վերաբերում է Գ. Քալաշյանի «Ներշնչումներ» գրքույկին: Ընդհանուր առմամբ ոգևորված չլինելով Քալաշյանի պոեզիայով՝ Աղբայանը սահմանափակվում է իրեն բնորոշ որոշ դիպուկ դիտողություններով և բանաստեղծության մասին ընդհանրապես իր ունեցած պատկերացումները նյութի հետ զուգորդելով. «Բանաստեղծը մի խորհող հոգի է, որ գիտականի պէս դիտում է կեանքն ու իրան և ընդհանրացումներ է անում, միայն օրէնքների տեղը բռնում են պատկերները: Ամեն իսկական բանաստեղծութիւն մի գումար, մի հաշիւ է ապրուած զգացումների, տրամադրութիւնների եւ մտքերի. նա խտացումն է ոգեկան որոշ վիճակի»<sup>11</sup>:

Համեմատելով այս դատողությունները Տերյանի «Մթնշաղի անուրջներ» գրախոսության մեջ տեղ գտած որոշ մտքերի հետ՝ նկատում ենք ընդհանրություններ, որ, անկախ քննչվող նյութի որակից ու գեղարվեստական արժեքից, տեղ են գտել ինչպես նշված. այնպես էլ նրա բոլոր քննադատական հոդվածներում. հանգամանք, որ փաստում է այն հետևողական ստեղծագործական միտումը, որով քննադատը փորձում էր համադրել, ուղղորդել գրական շարժումները՝ սնելով նրանց գեղարվեստի մասին իր ունեցած պատկերացումներով. «Բարձր ստեղծագործութիւնը գիտական օրէնքների նման, որոնք ընդգրկում են բազմաթիւ նոյնասեռ երեւոյթներ՝ իրենց ամփոփ ձեւով խտացում են բազմաթիւ նոյնօրինակ տրամադրութիւններ, զգացումներ ու դէպքեր եւ դրանով դառնում թելադրական ուժերի մի հանգոյց, որ բացվում է ընթերցողի գիտակցութեան մէջ, ճառագայթելով լայն տարածութեան վրայ եւ խթելով երեսակայութիւնը»<sup>12</sup>:

Պոեզիայի արժևորման այս չափանիշն է, որ միշտ թելադրել է Աղբայանին լինել չափազանց նրբանկատ պոետական ներշնչման, բանաստեղծական պատկերների հղացման ու կերտման, դրանց դրսևորումների հարցերը քննելիս: Գառնիկ Քալաշյանի արվեստը այս տեսակետից չի բավարարում քննադատին, նրա բանաստեղծությունների մեջ նկատվում են անշատ ու ընդհանրացված հոգեկան վիճակներ, բանաստեղծական երևակայության պակաս և որպես դրա հետևանք՝ պոետի անհատականությունը ցուցադրող տողերի բացակայություն. «Առանց բառերն ապրելու իր հոգում, նա կազմում է անգոյն շարքեր ու տուններ, ներքին հակասութիւններով լիքը, անզօր յուզելու և երևակայութեան վրայ ազդելու»<sup>13</sup>:

Ն. Աղբայանի գրական ճաշակն ու գեղարվեստական ըմբռումները բացահայտող աշխատանք է գերմանացի փիլիսոփա Կարլ Ռոբերտ Էդվարդ ֆոն Հարտմանին նվիրված մահախոսականը, որ գրվել է Հայդելբերգում 1906 թ. մայիսի 30-ին և տպագրվել Սոմ Դոչ ստորագրությամբ<sup>14</sup>: Այս և նմանատիպ այլ գրություններ մեծապես նպաստում են Աղբայանի գրականագիտական որոշ մոտեցումներ պարզաբանելու և հանգույցներ լուծելու համար: Դարասկզբին Արևմուտքում արմատավորված մի շարք փիլիսոփայական ուղղություններ, որոնք, որպես կանոն, իրենց արտահայտությունը գտնում էին նաև գրականության մեջ,

<sup>10</sup> «Նոր հոսանք», Թիֆլիս, 1914, թ. 4, էջ 643:

<sup>11</sup> «Ջանգակ», Թիֆլիս, 1908, թ. 31:

<sup>12</sup> Նույն տեղում, թ. 13:

<sup>13</sup> Նույն տեղում, թ. 31:

<sup>14</sup> Տե՛ս «Այլը», Թիֆլիս, 1906, թ. 34:

Աղբայանի կողմից խորապես ուսումնասիրվել էին: Այստեղ կանգ չենք առնի այն հարցին, թե այդ առնչությունները որքանով են դիտորոշել քննադատին ու նրա միտքը, և արդյոք ունեցել են ուղղակի ազդեցություն նրա գեղարվեստական ճաշակի վրա, թե ոչ: Այս հարցերը սերտորեն կապվում են Աղբայանի անհատականության, խառնվածքի, գեղարվեստի յուրօրինակ ըմբռնումների քննության հետ: Ուստի դրանք անջատ մեկնությունը արդյունաբար չէ և այլ առիթի նյութ:

Հարտմանին նվիրված այս փոքրիկ հոդվածով, մեր կարծիքով, լուծվում են ինչպես Տերյանի, Քալաշյանի, Մենուհու և ժամանակակից պոետներից շատերի, այնպես էլ հետագայում Ծանթի «Հին աստվածներին» վերաբերող մի շարք աշխարհայացքային մեկնակետեր: Լինելով հախտուն ու մարտնչող խառնվածքով ուժեղ անհատականություն՝ պայքարի, ազատության, ազգային արժեքների ընդգծում նրանք մամբ, Աղբայանը հակված չէր, կամ, մեղմ ասած, չէր ընդունում այն նկուն տրամադրությունները, որոնցով ապրում էին դարասկզբի սիմվոլիզմը և սրան հարող այլ ուղղություններ: Պատահական չէ, որ այս գաղափարախոսության հիմնաքարերը քննադատը տեսնում է բուրձայական նիրվանայի մեջ. «Պեսիմիզմի, անյուս, մոայլ յոնետեսութեան քարոզը իր գագաթնակետին հասաւ Օտպէնհատւերեան դպրոցի վերջին ամենադաժան ներկայացուցչի՝ Բանցէնի գրումներում. սարսափելի էօրիաներ, ուրոնք մասամբ արձագանք են տիրող հասարակական պայմանների ու հիասթափութեան»<sup>15</sup>:

Սիամանթոյին վերաբերող գրախոսությունը, որ կրում է «Հայ տառապանքի երգիչը» վերնագիրը և նվիրված է նրա «Հայրդիները» երրորդ շարքին (Փարիզ, 1908), Աղբայանի՝ արևմտահայ գրական նմուշների վերլուծությունների շղթայի մի կարևոր օղակն է: Իր գրական-քննադատական գործունեության ողջ ընթացքում Աղբայանը ուշի ուշով հետևել է հայության երկու հատվածներում տեղի ունեցող գրական պրոցեսներին՝ խնդիր ունենալով դրանք համադրելու, անջրպետելու լցնելու, միասնական գրական դպրոց տեսնելու նպատակը, որը նաև կազմակերպական ջանքեր էր պահանջում: Մրա վառ վկայությունն է «Եգիպտոսի հայոց հրատարակչական ընկերությունը» վերնագրով հոդվածը, որը ևս 1908թ. աշխատանք է և իր վրա շատ որոշակի կրում է այս մտահոգությունը. «Տանկահայ նորագոյն գրականութիւնը անձանօթ է ոչ միայն ռուսահայերիս, այլ և տանկահայ աճող սերունդին:

...Միջնդեռ թէ տանկահայ նոր սերունդի և ռուսահայերիս համար շատ մեծ նշանակութիւն ունի այդ հեղինակների հետ ծանօթանալը: Նրանցով է, որ պիտի կարողանանք գաղափար կազմել վերջին քառասնամեակի տանկահայ մտաւորականութեան զգալու և մտածելու եղանակին և գրականութեան ընդհանուր ոգուն: Կարելի է պնդել, որ մենք շատ ավելի բան գիտենք ռուս գրականութեան մասին, քան տանկահայ գրողների, ինչ-որ ամէն տեսակէտով ասվօթ է մեզ համար: Նոյնը կարելի է ասել տանկահայերի մասին այն տարբերությամբ, որ ռուս գրականութեան տեղը բռնում է ֆրանսականը»<sup>16</sup>:

Այս տրամաբանությամբ մի շարք հոդվածներ ու գրախոսություններ ուղղակիորեն ուրվագծում են Աղբայանի ծրագրային այն ելակետերը, որոնք լուծումը նա տեսնում էր հայ գրական-քննադատական մտքի միասնական ամբողջության մեջ, որ պիտի շաղախէր տարաբնէտ հոսանքներն ու ազդեցությունները: Ահա թե ինչու խիստ կարևորելով Պոլսի գրական ասուլիսները՝ Աղբայանը առիթ բաց չէր թողնում դրանց արձագանքելու, իր տեսակետները արտահայտելու համար: Այս շարքում առանձնանում է «Գրական ասուլիսների» Ծանթին նվիրված գրախոսությունը, ուր այլ հարցերի շրջանակում կրկին խոսում է արևելահայ և արևմտահայ գրական դպրոցների մասին, ցույց տալիս դրանց ուղղվածությունը, ազդեցության դաշտը, գրական երկի գեղարվեստական ու հասարակական արժեքի առնչությունն ու փոխկապվածությունը: Արևմտահայ գրականությունը Աղբայանը դիտում է առավելապես ֆրանսիականի արգասիք. «Նա դեռ չի ունեցել իր Աքոպյանը, ինքնատիպ են մեծ մասամբ գաւառացիները, ուրոնք մէջ լեռնանում են Հայրիկ և Սրվանձտեան: Գրականութեան հետ միասին նրանք քննադատութիւնը ևս ֆրանսիական դրօշմ է կրում, թեև միմիայն Արշակ Չոպանեանն է, որ փայլուն շնորհք ունի և վարպետօրէն գործադրում է ֆրանսիական մեթոդները հայ հեղինակների վրա»<sup>17</sup>:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> «Ջանգակ», Թիֆլիս, 1908, թ. 4:

<sup>17</sup> «Նոր հոսանք», Թիֆլիս, 1913, թ. 3, էջ 621:

Գրականության և քննադատության մեջ արևելահայերը և ակնտախաղերը, Աղբալյանի կարծիքով, հակոտնյա ուղղվածություն ունեն. մի դեպքում բովանդակությունն ու գաղափարական կողմն է իշխում, մյուսում՝ արվեստն ու ձևը: Լուծումը տեսնում է երկուսի ներդաշնակ համադրության մեջ:

Նույն անհանգստությունը տեսնում ենք «Նավասարդ» գրական տարեգրքին նվիրված գրախոսության մեջ, որ տպագրված է 1914թ. «Հորիզոնի» 30-31 համարներում և բովանդակում է հայոց ինքնուրույն գրականություն ստեղծելու և խթանելու՝ արևմտահայ գրողների ջանքերի դրվատումը՝ այս ուղղությամբ իր տեսակետների բաց ներկայացումով: Այստեղ շատ որոշակի խոսք կա Դ. Վարուժանի, Սիամանթոյի մասին ոչ այնքան զեղարվեստական տեսակետից, որքան նրանց ստեղծագործության հասարակական ուղղվածության և ազգային իդեալները իրական դաշտում տեսնելու ցանկության մղումով: Արևմտահայ գրական հոսանքների մեջ որպես ցայտուն դեմք նկատելով նաև Սիամանթոյին՝ Աղբալյանը հիմնականում հաստատում է իր այն բնորոշումները, որ արել էր դեռևս 1908 թ. «Հայ տառապանքի երգիչը» գրախոսության մեջ, որի շեշտադրումները պարզելուն էր միտված վերը բերված զուգահեռները: Այստեղ էականը Սիամանթոյի հզոր ներշնչման ու հոգեկան կուտակումների, ներքին գործը այլքների վրա ստեղծագործելու կարողության ընդգծումն է, որով Աղբալյանը նրան դասում է Իսահակյան-Տերյան գրական դպրոցների շարքում: Իր ինքնատիպ գրականությամբ Սիամանթոն դեպի իրեն է ձգում արևմտահայ բանաստեղծներին, որ արդեն տիրական ազդեցության նշան էր: Նրա պոեզիայում Աղբալյանը տեսնում է ոչ թե բուն իրականությունը, այլ նրա հայեցումը, որի ակունքները, անշուշտ, գտնվելով իրականության մեջ, համադրվելով դառնում են վերի-րական: Նյութի տիրական ուժը շարունակաբար նրան պահում է լարվածության մեջ, որ արգելք է բանաստեղծական ազատ ճախրանքների և ընդհանրացումների: Այստեղ էլ Աղբալյանը, ինչպես և Տերյանի պարագայում, կարևորում է մասի և ամբողջի համակողմանի ներթափանցման, եզակի ապրումներից համընդհանուր զգայությունների հասնելու բանաստեղծական եղանակները: Ահա թե ինչու Պատկանյանի, Բաֆֆու, Ահարոնյանի համեմատությամբ Սիամանթոյի վիշտը շատ ավելի անձնական է, ինքնամիտի ու կղզիացած. բանաստեղծական ոճը, ձևը, ասելիքի խիստ ընդգծված անհատական բովանդակությունը նրա պոեզիան դարձնում են միայն նեղ շրջանների սեփականությունը: Մի՞նչդեռ անջատ ապրումները, տառապանքի ու վշտի գալարումները կարիք ունեն հավաքական մի գաղափարի շուրջ ամբողջացման, անընդհատ հիշանքի և դեպի պարզություն տանող ճանապարհով հանրության բոլոր շերտերին ընկալելի դառնալու և ժողովրդականությունը վայելելու, որովհետև հենց այդ ժողովրդի վիշտն է նրա պոեզիայի նյութն ու բովանդակությունը: Հասարակական հնչելությունը այլայման նկատելով է, որ Աղբալյանը, Սիամանթոյի պոեզիան համարելով հայ ոգու ամենաճեղատաքրքրական արտահայտություններից, այդուհանդերձ գտնում է, որ այն պատմական դեր չի խաղում, նա «ավելի քանակագործ է, քան ճարտարապետ»:

Այս և մի շարք այլ դիտողություններ վերաբերում են Սիամանթոյի պոեզիային ընդհանրապես: Մասնավորապես «Հայրորդիների» երրորդ շարքում Աղբալյանը արդեն տեսնում է տարիների աշխատանք և բանաստեղծի հասունության ընդգծված նշաններ. «Հայրորդիների» այս երրորդ շարքով նա մեղմել է իր արտակենտրոն և մթին բացատրութեան ձևերը. քիչ են պատահում անյարիր ծածկաններ և քառերի՝ իրան միայն հասկանալի՝ հարևանութիւններ: Նրա տաղանդը հասունանում է և պարզությունը ու որոշությունը՝ բարձր արեստի այս մեծագույն լատկանիչները, նրա համար ևս ըմբռնելի և պարտաւորիչ են դառնում»<sup>16</sup>:

Հայ գրականության՝ դեպի ազգայնացում տանող հոսանքի մեջ Աղբալյանը Սիամանթոյին դիտում է որպես շատ ինքնատիպ ու տաղանդավոր մի երևույթ և վստահորեն ակնկալում նրանից ավելի կատարյալ ու հայեցի երկեր:

Ժամանակակիցների շարքում իր ունեցած գրական վաստակով ու փառքով Աղբալյանը լուրջ վերաբերում և գնահատություն է ցուցաբերում Գ. Սունդուկյանի հանդեպ՝ նրան համարելով «հայ թատերագիր տաղանդներից ամենափայլունն ու զօրեղը»: Ցավոք, առայժմ մեզ հայտնի նյութերի շարքում գրողի մահվան տարեկիցի առիթով գրած «Գ. Սունդուկյանի «Կտակը» հողվածն է («Հորիզոն», 1913, թ. 59), որ բավականին լույս է սփռում Աղբալյանի՝ Սունդուկյանի

<sup>16</sup> «Ձանգակ», Թիֆլիս, 1908, թ. 2:



ստեղծագործության հանդեպ ունեցած մոտեցումներին, և մեր դիտարկած շրջանում գրած մի փոքրիկ գրախոսություն, որ վերաբերում է «Բաղնսի բոխչային»: Զույգ գրությունների տրամաբանությունը փաստում է, որ Սունդուկյանը եղել է քննադատի մշտական ուշադրության կենտրոնում: «Հորիզոնի» նույն համարի ազդագրում Կովկասի հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցած և Սունդուկյանին նվիրված գրական հանդեսի ծրագրում այլոց թվում կարողում ենք նաև Աղբալյանի ելույթի թեման՝ «Սունդուկյանի տաղանդի հարազատությունը» վերնագրով: Հակված ենք կարծելու, որ նրա թողոնի ամբողջացման պարագայում ի հայտ կգան Սունդուկյանի ստեղծագործությանը վերաբերող այլ քննական գործեր, որովհետև իր ստեղծագործ էությանը, մարդկային ու ազգային նկարագրով Սունդուկյանը համահունչ ու հարազատ է Աղբալյանի հոգուն: Դա շատ պարզ երևում է «Գ. Սունդուկյանի «Կտակը» հողվածում, որից Սայաթ-Նովայի, Իսահակյանի, Թումանյանի, Աղայանի հանդեպ ունեցած ջերմության աստիճանն է զգացվում:

«Բաղնսի բոխչայի» սեղմ գրախոսության առանցքը հիմնականում գրվածքի ժանրային առանձնահատկությունն է վերաբերում, որը, Աղբալյանի կարծիքով, բնորոշ է հայ կատակերգական դրամատուրգիային ընդհանրապես: Իր չափանիշը ֆրանսիական կատակերգությունն է, որ գերազանցապես նրանց աշխույժ բնույթի ու խառնվածքի արդյունքն է: Մեր ազգային բնավորությունը՝ իր ծանրախոհ լրջությամբ, ընդունակ չէ կերտելու կատակերգությանը բնորոշ հանգամանքները. «Այդ կարելի է տեսնել նաև Սունդուկյանի նոր երկից: Թե՛և հեղինակը «կատակ» է անւանում իր գրածքը, բայց իսկապէս նա կենցաղագրական պատկեր է, ծանրաշարժ և արձակունակ (պրօպոկի)՝ մեր կենքի մնամ: Չըկայ կատակի աղը կազմող աշխուժությունն ու թեթևությունը»<sup>10</sup>:

Թե որքան բարձր է Աղբալյանը գնահատում Սունդուկյանին և նրա գծած ճանապարհը, երևում է Անուշավան Վարդանյանի «Անարխիստ» վոդևիլի գրախոսության մեջ, ուր էականը ոչ այնքան վերջինիս ստեղծագործության բնորոշումներն են, որքան գրականության և արդիականության, տվյալ դեպքում՝ կատակերգության ու նրա արտահայտամիջոցների ճիշտ ընտրության խնդրի աղբալյանական մեկնաբանությունները. այն, ինչ բնորոշ ու բնական էր 1870-80-ական թվականների կատակերգությանը՝ Սունդուկյանի տաղանդի անվիճելի իշխանությամբ, ուշացած և գրական տեսակետից անարժեք են դարասկզբին, երբ հասարակական մտածողության ու լեզվի մեջ կատարվել են կտրուկ շրջադարձեր:

1906-1909թթ. շրջանի Աղբալյանի գրաքննական աշխատանքների շարքում կարևորվում է Ղ. Աղայանի «Քեթորոլի. արկածներ Քեթորոլու կենքից» (Թիֆլիս, 1908) գրքի գրախոսությունը, որով Աղբալյան քննադատը մեզ է ներկայանում իր գրական-գեղարվեստական ըմբռնումների ողջ բովանդակությամբ: Սայաթ-Նովա, Թումանյան, Իսահակյան, Սունդուկյան, Աղայան - ահա այն փունջը, որով ամբողջանում է Աղբալյանի գրական ճաշակն ու հայացքը: Անտեղի և մանավանդ անպտուղ պրպտումներ կլինեն Աղբալյանի աշխարհայացքային ակունքները փնտրել ժամանակի արևմտյան որոշ տեսաբանների՝ թեկուզև շատ առաջադեմ և ազդեցություն ունեցող, երկերում: Դրանց խորը իմացությունն ու ուսումնասիրությունը արգելք չեն եղել ամբարելու նրա հաստատական ինքնուրույնությունը, որ պայմանավորված էր առաջին հերթին իր բնածին կարողություններով՝ չափազանց ինքնատիպ ու համարձակ դրսևորմամբ: Հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի խտացումը պիտի տեսնել Աղբալյանի գեղագիտական հայացքների մեջ և այդ շրջագծում միայն երևակել ու մեկնաբանել նրա ժամանկությունը: Սրանով պիտի բացատրել այն խորը կապվածությունը, որ ստեղծագործական առաջին քայլերից մինչև կյանքի վերջին պահերը տածում էր նա իր ժողովրդի ոգու արտահայտությունը դրսևորող այս գրողների նկատմամբ:

Ղ. Աղայանին նվիրված գրախոսությունը դրա փայլուն վկայությունն է: Գեղարվեստական անզուսպ հիացումը վերաբերում է թե՛ գրախոսվող գրքին, թե՛ Աղայանի ստեղծագործությանն ընդհանրապես: Գրվածքի ներդաշնակ կառույցը, լեզուն, ոճը, տաղանչափությունը, ասելիքի թեթև ու սահուն անցումները, ոգու հզոր ուժը, մտքի իմաստուն պարզությունն ու խորությունը այն հատկանիշներն են, որոնցով գրական ստեղծագործությունը ձեռք է բերում ժողովրդական վայելում ու մնում նրա հիշողության ծայքերում: Սա է բարձր արվեստի աղբալյանական չափանիշը և այս սահմանում պիտի փնտրել ու ամբողջացնել գրականագետի նրա

<sup>10</sup> Նույն տեղում, թ. 22:



կերպարը: Ղ. Աղայանի ստեղծագործությունը գոհացման այս աստիճանում է արժևորվում. «Աղայանի երկերը ամենահսկայական ստեղծագործութիւններն են մեր գրականութեան մէջ և կոչուած են Յովհ. Թումանյանի և Ա. Իսահակեանի երկերի հետ մեր ինքնուրույն բանաստեղծութեան հիմքը կազմելու: Այդ ճանապարհից ամեն շեղում մեզ տանում է դէպի խորթացում. այդ ուղղութիւնն է միայն, որ զարգանալով պէտք է դառնայ դասական»:

Աղայանի ստեղծագործութիւնը հայկական է այն մտքով, որ նա ցոյացնում է մեր ժողովրդի ոգին կիրթ վիճակում. այդ ոգու տարրերը, որտեղից էլ եկած լինեն փարելու տոհմային բունքին՝ արևմուտքից, թէ արևելքից, չեն նկատուում որոշապէս. նրանք բոլորը ձուլել են, դարձել մի հոյակապ ու համաչափ ամբողջութիւն: Ոչ թէ միթէն է, որ հայկական է, այլ մտածելու և զգալու եղանակը»<sup>20</sup>:

Ն. Աղբալյանի՝ մանկական և թարգմանական գրականությանը վերաբերող աշխատանքները հիմնականում ընթացիկ գրական արտադրանքի արձագանքներ են և հիմնավոր պատկերացում են տալիս Աղբալյանի՝ նաև այս բնագավառներին առնչվող դասողություններին մասին, որ սկսվելով «Մուրճից»՝ շարունակվել ու զարգացել են «Նոր հոսանքում», ապա «Հորիզոնում»: Գրական նման նմուշներով հարուստ է նաև 1906-1909թթ. ստեղծագործական շրջանը, որ էապես լրացնում է գեղարվեստական թարգմանության նկատմամբ ունեցած նրա մտնեցումները: Ուսումնասիրության մի առանձին դրվագ կարող է ծառայել այս բնագավառում նրա ունեցած վաստակը, մանավանդ գեղարվեստական թարգմանությանը վերաբերող տեսական նյութի բացակայության պայմաններում:

Ուշագրավ են Ստ. Լիսիցյանի, Հովհ. Թումանյանի և Լ. Ծանթի հրատարակած «Լուսաբեր» այբբենարանի Ա և Բ տարիների՝ Աղբալյանի գրախոսությունները<sup>21</sup>: Այստեղ, մանկական գրականության գեղարվեստական արժանիքներից զատ, կան կրթությանը և դաստիարակությանը վերաբերող շատ օգտակար մտքեր, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը: Հատկապես կարևոր են «ազգային կրթություն» հասկացության նրա մեկնաբանությունները և այդ ուղղությամբ արված առաջարկները, որոնք բոլորն էլ այս դեպքում ներառվում են գեղարվեստական նյութի մեջ: «Լուսաբերը» այս և այլ տեսանկյուններից լիովին բավարարում է Աղբալյանի պահանջները: Այս գրախոսությամբ Աղբալյանը մանկավարժական իր հմտությունների և ապագա գործունեության հիմքն է դնում:

Հովհ. Թումանյանի մանկական ստեղծագործություններն էլ քննարկում 1909 թ. մի գրախոսություն, որ կրում է «Ա» ստորագրությունը, և, մեր կարծիքով, պատկանում է Աղբալյանի գրչին: Նման ստորագրությամբ մի փայլուն գրախոսական տպվել է նոր «Մուրճում»՝ (1904 թ. 1) Ն. Թումանյանի «Բանաստեղծություններ» ժողովածուի առիթով (Թիֆլիս, 1903), որ առավել հանգամանալից քննարկվում է «Անուշը»: Համեստելով այս նյութերը «Լուսաբերի»՝ Թումանյանին վերաբերող հատվածների հետ, բաղդատելով լեզուն, գեղատեսչության չափանիշները, նույնիսկ առանձին արտահայտություններ՝ հակված ենք հաստատելու մեր ենթադրությունը և նշված աշխատանքը դասելու Աղբալյանի՝ Թումանյանին նվիրված աշխատանքների շարքը: Հեղինակի ինքնությունը ճշտող պարզ օրինակներ են հետևյալ հատվածները. «Թումանեանի մանկական գրածքները եւս հայրենի են, ընտանի: Նրանք վերցրած են մեր բուն իրականութիւնից, նրանց սիւժեները բուն հայկական են, դրա համար էլ նրանք միանգամայն մատչելի են հայ երեխային, հայ իրականութեան մէջ շնչած և սնած մանկան: Օտարասին, հայրենի իրականութիւնից դուրս մեծացած և սնած երեխաները աղչափ էլ հեշտութեամբ չեն իրացնի Թումանեանի գրածքները, ու այս հանգամանքը ապացոյց է հէնց սրանց հարազատութեան. մայրենիութեան»<sup>22</sup>:

Նույն մտքերը կարդում ենք նաև «Լուսաբերի» գրախոսության մեջ. «Մի դասագիրք այնքան անելի նպատակահարմար և լաւ է, որքան նա ազգային-ժողովրդական միութիւն է մատակարարում, հանրամարդկային գաղափարները ազգային գոյնով է ներկայացնում և ըստ կարելույն նոյն այդ ազգի ստեղծագործութիւնից է առնում իր տարրերը կամ նորերն ստեղծում միեւնոյն ոգով եւ ուղղութեամբ»:

<sup>20</sup> «Վտակ», Թիֆլիս, 1908, թ. 135:

<sup>21</sup> «Ջանգակ», Թիֆլիս, 1908, թ. 40, թ. 96:

<sup>22</sup> «Գործ», Թիֆլիս, 1909, թ. 29:

Այսպիսով, բացի զուտ մանկավարժական առաելությունները, մենք մի դասագրքի մէջ որոնելու ենք հարազատ մայրենի լեզու, ազգային-ժողովրդական մտածելու և զգալու եղանակ, ազգային կենցեցից առած պատկերներ և օրինակներ<sup>21</sup>:

Այս փաստարկներին որպես հավելում կարող ենք մատնանշել Ղ. Աղայանի «Քէօթողլի. արկածներ Քէօթողլու կենցեցից» գրքի գրախոսությունը, ուր իշխում է մտածողության նույն կերպը, ներքին շունչն ու ոգին:

Բավական լայն է Աղբայանի՝ թարգմանական գրականության շուրջ արված աշխատանքների տեսադաշտը. այն ներառում է ինչպես ռուս, այնպես էլ եվրոպական թե՛ ժամանակակից, թե՛ դասական հեղինակների գործերը: Այս տեսակետից բեղմնավոր գործունեություն է ծավալել հատկապես «Մուրճում». շուրջ 23 գրախոսություն, որոնցում հայերեն թարգմանությանը վերաբերող գեղարվեստական, լեզվական, ռեական դատողություններին զուգահեռ՝ կան ընդարձակ հատվածներ, որ վերաբերում են թարգմանվող հեղինակի ինքնությանն ու ստեղծագործությանը ընդհանրապես: Ժամանակակից հայ թարգմանական արվեստը իր մի շարք դրսևորումներով չի գոհացնում Աղբայանին: Ամենայն հավանականությամբ այս մտահոգությունն է, որ դրոշ է նրան այդքան բծախնդրությամբ և հետևողականությամբ ուսումնասիրել և համապատասխան դիտողություններով, առաջարկներով գրական աշխարհին ներկայացնել ժամանակակից թարգմանիչների մեծ մասին:

Թարգմանական խնդիրների հանդեպ ունեցած նույն տրամաբանությունն է իշխում նաև Աղբայանի 1906-1909 թթ. ստեղծագործական շրջանի գործերում: Այս տարիներին նա գրախոսել է ինը թարգմանական աշխատանք (Լ. Տոլստոյ, Մ. Լերմոնով, Նադսոն, Ի. Իվանով, Ա. Ցագարելի, Կոնան-Դոյլ, Վ. Հաուֆ), որոնց մէջ ուշագրավ դիտողություններով ու մեկնաբանություններով աչքի են ընկնում հատկապես Մ. Տարախյանի «Թարգմանական մեղեդիներ» ժողովածուի (Ալեքսանդրոպոլ, 1908) և Արսեն Տեր-Դանիելյանի թարգմանության՝ Կոնան-Դոյլ. «Օեղով Լոմսի արկածները. ուշացած վրեժխնդրություն» (Բաքու, 1908) գրախոսությունները, ուր առավել խտացած են նրա հայացքները գեղարվեստական թարգմանության հանդեպ: Համահունչ ու հարազատ ձևերի, լեզվի ու ոճի բնութայն կադապարների ընտրության ու գործածության իր տեսակետները Աղբայանը զուգորդում է գեղարվեստական երկի, բանաստեղծության մասին իր ունեցած պատկերացումների հետ. թարգմանությանը պետք է մտնենալ նույն ստեղծագործ մղումով՝ պահպանելով բնագրի ոգեկան շունչը, ողիմը, ներքին շարժումն ու սահունությունը: Այս չափանիշներից շեղումը հանգեցնում է գեղարվեստական գործի արժեզրկման: Գլխավոր եղակետը այս դեպքում Աղբայանը համարում է լեզուն և նրա իմացությունը, որի առանցքի շուրջն է պտտվում նրա հիմնական ասելիքը. «Մեր թարգմանիչներին խորհուրդ ենք տալիս ամեն անգամ դիմել գաւառաբարբառի օգնության: Թանախ նրանք աւարտած են լինում պետական դպրոցները, ուր հայոց լեզուն անունով միայն գոյություն ունի և ուր նրանց միտքը կադապարված է օտար լեզով: Այս է պատճառը, որ նրանց լեզուն հայացի շունչ չի կրում և շարադասութեան կարգն ու բառերի կապը անհարազատ բնույթ ունեն:

Միշտ է, մեր նոր լեզուն դեռ վերջնական կերպարանք չի ստացել, բայց նա ձգտում է կանոնավոր հայերեն դառնալու և շատ զգայուն է օտարամուտ ձևերի և դարձածների նկատմամբ<sup>22</sup>:

Գրականագետի գրիչը բավականին հմուտ է նաև գրական դիմանկարներ կերտելիս. Տոլստոյին («Ջանգակ», 1908, թ. 46) և Միլտոնին («Գործ», 1908, թ. 53, 54) նվիրված ընդարձակ հոդվածները լավագույն նմուշներն են այս շարքին պատկանող նրա աշխատանքների և խոսուն վկայությունը՝ Աղբայանի բազմակողմանի իմացության և հետաքրքրությունների:

Պատմական մեծ արժեք կարող է ներկայացնել Օուշիի հայ-թուրքական ընդհարումների մանրամասները ներկայացնող թղթակցությունը, որին մասնակից է եղել նաև Ն. Աղբայանը և ականատեսի իր տպավորությունները հղել Թիֆլիսի «Ալիքին»՝ Սոմ Ծոփ ստորագրությամբ<sup>23</sup>: Հայ-թաթարական ընդհարումներին Աղբայանն ընդարձակ հոդվածաշարով անդրադարձել է նաև 1905 թվականին՝ «Ուսումնասիրություն հայ-թաթարական ընդհարումների» վերնագրով, որ դեպքերի բերումով մնացել է անավարտ<sup>24</sup>:

<sup>21</sup> «Ջանգակ», Թիֆլիս, 1908, թ. 9:

<sup>22</sup> Նույն տեղում, 21:

<sup>23</sup> Տե՛ս «Ալիք», Թիֆլիս, 1906, թ. 77:

<sup>24</sup> Տե՛ս «Ռազմիկ», Ֆիլիպե, 1905, թ. 11, 12, 13, 16:

Ն. Աղբալյանի մանկավարժական և կրթության բնագավառին վերաբերող հայացքների արմատները կտեսնենք՝ կարդալով նրա «Թեմական դպրոցները եւ Գեորգեան ճեմարանը» հոդվածը, որ գրվել է 1907 թվականին Լոզանում<sup>27</sup>: Ընդհանուր առմամբ սա մի ծրագրային ելույթ է, որով նա մեծ հմտությամբ ներկայացնում է իր ժամանակի կրթական համակարգը և ուրվագծում նրա ապագան: Գեորգյան ճեմարանի մասին որևէ առանձին միտք կամ հիշատակություն չունի այս նյութը: Այն ուշադիր հետևողականությամբ վերլուծում է հայ իրականության մեջ կրթության ու դաստիարակության աստիճանը որոշակիորեն ցուցանող թեմական դպրոցների և ճեմարանների ընդհանուր մակարդակը և կատարում համարժեք եզրակացություններ: Իր տեսակետների արժեքից ու նշանակությունից գատ. այս հոդվածն ունի նաև կենսագրական բնույթի կարևորություն, այնքանով, որ պարզաբանում է Աղբալյանի՝ Կովկասի գույզ ճեմարաններն անավարտ թողնելու հանգամանքը:

Ընդհանուր գծերով ներկայացնելով Ն. Աղբալյանի 1906-1909թթ. ստեղծագործական ժառանգությունը՝ ամենևին հակված չենք կարծելու, որ դրանով ի մի բերվեցին մեծ մտածողի գրչի՝ գրական, գիտական, հասարակական-քաղաքական ամենատարբեր հարցերն ընդգրկող աշխատանքները: Դրանց մեկտեղումը հրատապ խնդիր է այսօր. հոգևոր ու ազգային արժեքների անկման մեր օրերում Աղբալյանը հույսի ու հարատևման աննախադեպ օրինակ կարող է դառնալ շատ-շատերի համար:

**А. Е. ПЕТРОСЯН - Литературоведческие взгляды Н. Агбаляна (1906-1909).** - Литературно-критическая деятельность Никола Агбаляна началась в 1896 году и не прекращалась до самой его смерти в 1947-м. Общеизвестно активное участие Агбаляна в политической жизни этого тревожного исторического периода, однако политическая деятельность не помешала ему заниматься литературно-критической работой.

Почти все его статьи опубликованы в кавказских журналах и газетах конца XIX - начала XX века. Особого внимания заслуживают его критические работы, созданные в 1906-1909 годах и не вошедшие в «Литературно-критический сборник» (Бейрут, 1959). В этот период Агбалян публикует в газетах «Зангак», «Втак», «Горц», «Арач» и др. около сорока статей, среди которых находим представляющие большую ценность отзывы на произведения Ов. Туманяна, Г. Сундукяна, К. Агаяна, В. Теряна, Сиаманто.

<sup>27</sup> «Փայլակ», Թիֆլիս, 1907, թ. 13, 14: